

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուրոս Բուրոս Ղալին անդրկովկասյան տարածաշրջանում իր գլուխվազում ժամանակ հանդես է եկել ազգամիջյան բախումների ու դրանց լուծման ուղիների վերաբերյալ մի շարք հայտարարություններով: Երա «Ջարգայման օրակարգ» ծրագրի դրույթները խղճաբար դիտարկելու և որպես զարգացման հիմք, փնտրությունը առաջնությունը շարժել, շրջակա միջավայրը տեսլականության հիմք, արդարությունը հենասյուն, ժողովրդավարությունը կառավարման լավագույն ձև:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը տարածաշրջանում այսօր էլ միայն «մարտավարական» Ադրբեջան, վրաստան, եւ ուշադրության չի արժանացրել այսպես կոչված «գաղութները» Լեռնային Ղարաբաղ, Աբխազիա, Հարավային Օսիա: Հավանաբար, դա համապատասխանում է իրենի տրամաբանությանը: Միջազգային բարձրագույն կազմակերպության ղեկավարը «պարտավոր է գործ ունենալ» միայն այդ կազմակերպության կողմից ձևանշված սուբեկտների հետ: Սակայն այդ դեպքում ստացվում է հայրենի միակողմանիություն հոգուր ճնշողների եւ ի վնաս ճնշված ժողովուրդների, այսինքն ոչ մի կերպ չի ստացվում Սողոմոնի արդար դատ, ինչը հռչակված է հենց իր Բուրոս Ղալիի վերջ թվարկած դրույթներից մեկում: Հայաստանում, որտեղ նրա ելույթները հիմնականում կրում էին ձեռնարկային-զգուշավոր բնույթ, նա առանց վերապահումների հայտարարեց. «Մեր դիրքորոշումը՝ դա պետությունների տարածքային ամբողջականությունն է, սահմանների անձեռնմխելիության գոտիներն ունեցող չափանիշները, ուրիշ տարածքների մի մասը ուժով գավթելու փորձերի դատապարտումը, ՄԱԿ-ի բոլոր որոշումների կատարումը»:

Ղուք կատեք այսպիսին է հենց ՄԱԿ-ի դիրքորոշումը: Ենթադրենք: Այս դեպքում անտեսվում է եւս մեկ հիմնարար սկզբունք՝ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը:

Բուրոս Ղալին իր պարտավանություններից ելնելով միշտ վկայակոչում էր Ղարաբաղյան հարցի վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումները, չպարձաօտանելով անգամ, թե ինչ պայմաններում են ընդունվել դրանք: 1992թ. փետրվարի 13-ին եվրախորհրդարանը ձայների մեծամասնությամբ ընդունեց մի բանաձե, որի նախաբանը պետք է որ հայրենի ու հասկանալի լինի յուրաքանչյուրին:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

-Նկատի ունենալով, որ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը երեք տարի անընդհատ ենթարկվում է շրջափակման ու հարձակումների:

-1992թ. հունվար ամսվա ընթացքում Ղարաբաղի հայկական բնակավայրերը 34 անգամ ենթարկվել են զանգվածային հրեղակոծման եւ 1100 անգամ հրթիռակոծման որը պարձաօ է դարձել շուրջ 100 մարդկային զոհերի այդ թվում կանանց եւ երեխաների:

-Ղարաբաղի բնակչության վիճակը առողջապահության եւ սննդամթերքի մատակարարման բնագավառում ավելի վատթարացել է ու հասել անթույլատրելի սահմաններին:

-հաշվի առնելով ազգային փոքրամասնությունների անփոխարինելի իրավունքը ցանկացած ժողովրդավարական պետության մեջ:

-Եվրախորհրդարանի հետեւողական որոշումները, որոնք ձանձուր են Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը:

-որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդավարորեն ընտրված իշխանությունները դիմել են եվրահամայնքին ՄԱԿ-ին Անկախ պետությունների համագործակցությանը եւ ԵԱՀԿ-ին՝ (այսուհետեւ շարադրվում

է որոշումը): ԵՎ ի՞նչ, միջազգային հեղինակավոր կազմակերպության այս պարտական բանաձեից հետո ՄԱԿ-ը պարզապես «խուլ ու համր» ձեռնարկ, ինչպես Ադրբեջանում հայերի նկատմամբ կատարված միջնադարյան ստոր վայրագությունների դեպքում (Սոււմգայիթ, Կիրովբադ, Բաքու...):

Իսկ ի՞նչ էր մնում անել Լեռնային Ղարաբաղի հայերին, երբ «վիճակը հասել էր անթույլատրելի սահմանների», ոչ միայն լրջել էր համբերության բաժակը, այլեւ ամբողջ սրությամբ հասնել էր լինել-չլինելու խնդրը: Ինչպես ամեն մի քաղաքակիրթ ժողովուրդ, նա պարտավոր էր զենքը ձեռքին պաշտպանելու իր կյանքն ու արժանապատվությունը, իր հայրենիքը: Եվ միայն այն բանից հետո, երբ Լեռնային Ղարաբաղի հայերը արժանի հակահարված տվեցին լկտիայած գաղութարարին, ՄԱԿ-ը արթնացավ ընդի ու շտապեց ՄԽ-ի միակողմանի բանաձեեր «արտադրել» հոգուր Ադրբեջանի: Արդյո՞ք այս պատերազմի ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը բարոյական իրավունք ունի Ղարաբաղի հարցում, հանդես գալու անկողմնակալ դատավորի դերում:

Շարժելով թվում էր, թե տարածաշրջանում Բուրոս Ղալիի համար հեշտ չի լինի խուսանա-



խորհրդային հայրենի այն օրերի, որի համաձայն երբ միութենական համրապետությունը դուրս է գալիս ԽՍՀՄ կազմից, այդ հանրապետության ինքնավար կազմավորումները կամ ազգային փոքրամասնություններն իրավունք ունեն ինքնուրույն վճռելու իրենց հեղափոխական ճակատագիրը: Ուրեմն մենք դարձալ ընդհարվում ենք օրենքների միակողմանի մեկնությանը եւ դարձալ հոգուր աշխարհի չարաբաստիկ ստատուս-քվոյի (Ադրբեջանի դեպքում ստատուս-քվո-անտե-թել-լուսի, այսինքն՝ միջապարտագրված վիճակի) պահպանման:

Երեւանում տեղի ունեցած մամլո ասուլիսում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն, ի պատասխան լրագրողներից մեկի հարցին, խոսելով այդ կազմակերպության անդամ երկրների սահմանների անխախտելիության սկզբունքի մասին, բացատրեց, որ խոսքը ուժի օգնությամբ դրանք փոփոխելու անթույլատրելիության մասին է Բայց այն դեպքում, երբ գոյություն ունի համապատասխան երկկողմ համաձայնություն (ինչպես տեղի է ունեցել, օրինակ, Հաբեշտանի նախկին գավառի հիման վրա էրիտրեա պետության կազմավորման ժամանակ), ապա ՄԱԿ-ը ողջունում է նոր պետությունների առաջացումը: Մեր դեպքում անհրաժեշտ է, որպեսզի

ՄԱՐՏԵՐԸ ՇԱՅՈՒՄ ԵՆ ԱՄԵՆԱՅԱՍԱՌՆԵՐԸ

վելու այնպիսի հակադիր սկզբունքների միջե, որպիսիք են տարածքային ամբողջականությունը եւ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Բայց նա նույնիսկ չէր էլ ջանում ինչպես հարկն է լուսարանել այդ հիմնահարցը:

Երկայրուս իրենց ճակատագիրը տնօրինելու ժողովուրդների (ազգի) իրավունքը դարձել է միջազգային իրավունքի հանուրի կողմից ձանաչված հրամայական սկզբունք, որն ընդգրկում է ինչպես ներքին կողմը, այսինքն ժողովրդի իրավունքը առանց արտաքին միջամտության վճռելու փնտրության, քաղաքական եւ ընկերային իրավակարգի բնույթը, այնպես էլ արտաքին կողմը՝ ընտրելու իր տեղը պետությունների համակարգում, միանալու մի ալ ժողովրդի հետ կամ կազմելու ինքնուրույն պետություն:

Անհրաժեշտ է, որպեսզի արքիոմա դառնա այն դրույթը, որ միջազգային իրավունքի բոլոր հիմնական սկզբունքները փոխկապակցված ու հավասարազոր են, եւ առաջնորդվելով դրանցից մեկով, չի կարելի խախտել մյուսը:

Կարող է թվալ, թե մենք դեմ ենք տարածքային ամբողջականության եւ սահմանների անձեռնմխելիության սկզբունքին: Ամենեւին: Սակայն այդ սկզբունքը պետք է վերաբերի գլխավորապես միջազգային հարաբերություններին եւ նպատակ ունենա պաշտպանելու պետության տարածքը արտաքին սպառնալիքներից ու ոտնձգություններից: Այնուհետեւ, տվյալ կոնկրետ դեպքի համար պետք է պարզ լինի, թե իրականում ո՞վ է խախտել ուրիշ երկրի տարածքային ամբողջականությունը: Չէ՞ որ Լեռնային Ղարաբաղի (եւ Եվրոպայի) պարկանելությունը Ադրբեջանին ամրագրված է միայն ԽՍՀՄ սահմանադրության կողմից եւ չի վավերացված ոչ մի ալ իրավական ակտով: Այն բանից հետո, երբ ԽՍՀՄ-ը դարձել է անգո, նրա իրավական ակտերը ինքնուրույն կորցնում են իրավական ուժը: Ո՞վ պետք է պաշտպանի մեռյալ պետության օրենքները, կատարի դրանք: Իրականում այնպես է ստացվում, որ այդ օրենքները կատարվում են, եւ ոչ թե ինչ-որ անպատասխանատու սուբեկտի, ալ հենց ՄԱԿ-ի կողմից: Բայց այդ դեպքում Լեռնային Ղարաբաղը ինքնորոշվել է հենց շնորհիվ

Ադրբեջանը համաձայնի ԼԳ՝ անջատվելուն: Ի՞նչ պետք է ձեռնարկել այդ նպատակին հասնելու համար: Մեր կարծիքով

1. Պետք է հասնել այն բանին, որպեսզի համաշխարհային հանրությունը ընդունի, որ բախումը տեղի է ունենում ոչ թե Հայաստանի ու Ադրբեջանի, ալ Ադրբեջանի եւ Ղարաբաղի միջե: Լ Տեր-Պետրոսյանի կարծիքով, այդ խնդիրը կարող է լուծվել, եւ համեմատաբար արագ, միայն Բաքվի ու Արեւիստանի միջե ուղղակի երկխոսության դեպքում:

2. Նպատակահարմար է, որպեսզի Հայաստանը եւ ԼԳ-ն պահանջեն ՄԱԿ-ից, որպեսզի նա, թեկուզեւ հեղին թվով, դատապարտի Ադրբեջանի տարածքում տեղի ունեցած հայերի ցեղասպանությունը (Հայ-օղոսաստանյան համագործակցության, հիմնադրամի առաջարկությունը): Չափազանց նպատակահարմար է նաեւ պահանջել ՄԱԿ-ի ՄԽ-ից ընդունելու Ղարաբաղյան հարցի վերաբերյալ նոր բանաձեեր: Եվրախորհրդարանի հայրենի որոշումների հիման վրա: Իմիջիառուց, Եվրախորհուրդը ընդունել է նոր արդարացի որոշում, որը դատապարտում է Հայաստանի երկարատե շրջափակումը:

Իսկ ի՞նչ անել այն դեպքում, եթե այս (հաջող անցկացված) միջոցառումներից հետո էլ Ադրբեջանը շարունակի իր նեոգաղութարարական քաղաքականությունը եւ չհամաձայնվի ԼԳ՝ անջատմանը: Այդ դեպքում էլ պաշարի հնարավորություններն սպառված չեն լինի, գլխավորը միշտ «թամբի վրա» գտնվելն է: Մասնավորապես, մի հնարավորություն էլ թաքնված է այն թանում, որ միջազգային իրավունքը հոգ է տանում միայն այն պետությունների տարածքային ամբողջականության մասին, որոնք իրենց գործողություններում գործնականում պաշտպանում են ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը: ՄԱԿ-ի հարկիան ճնշվող ժողովուրդներին տալիս է ինքնորոշման եւ օրինական ինքնապաշտպանության իրավունք: Ինչպես ասում են, չկա չարիք առանց բարիքի»:

Որպեսզի մեզ հետ հաշվի նստեն, մենք պետք է համառ եւ հաստատական լինենք մեր պաշարում: